

## ՎՐԱՅ ԿԵԱՆՔԻՅ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՅ

Վրաստանի ծխական ուսումնարանների նոր ծրագիրը.— Գրագիտութիւն տարածող ընկերութիւնը.— Վօօպերատիվ շարժումը վրացական կեանքում:

Վերջին շաբաթներս վրաց հասարակութեան և մամուլի մէջ շատ են խօսում եկեղեցական-ծխական ուսումնարաններում տեղի ունենալիք փոփոխութեան մասին: Բացի մինխտորական և հասարակական տարրական դպրոցներից վերջին տարիներս հին Վրաստանի երեք թեմերում, այն է՝ Գարթլ-Կախէթում կամ բուն Վրաստանում (Թիֆլիսի նահանգ), Իմերէթում և Գուրիա-Մինգրելիայում (Վութալիսի նահանգ) մէկը միւսի յետեից և մեծ արագութեամբ բացւում են եկեղեցական-ծխական ուսումնարաններ, որոնք բոլորն էլ պահւում են օրթօքօքս սինօզի հաշուով: Բաւական է ասել, որ մինչդեռ այդ ուսումնարանների հիմքը դրուել է ընդամենը միայն 15 տարի առաջ, ներկայ բոլորէիս միմիայն Գարթլ-Կախէթի թեմում գոյութիւն ունեն 200 այդպիսի ուսումնարան: Այդ օգտաւէտ ձեռնարկութեան ինիցիատօրն եղել է 1885 թուին Վրաստանի այն ժամանակի էքզարքոս Պաւէլը՝ խորհրդակցութեամբ Իմերէթի հռչակաւոր առաջնորդ վրացի Գաբրիէլ եպիսկոպոսի: Բացի վերոյիշեալներից կան նաև բաւականաչափ ուսումնարաններ, որոնք պահւում են «կովկասում քրիստոնէութիւն վերականգնող» և «Վրաց մէջ գրագիտութիւն տարածող» ընկերութիւնների հաշուով: Այդ եկեղեցական-ծխական ուսումնարանները ունէին մինչև օրս եռամեայ ուսում և նրանք ջոկւում էին միւս բոլոր տեսակ դպրոցներից իրանց այն մեծ առաւելութեամբ, որ տեղացի մանուկները աճնում էին այնտեղ ուսումը մայրենի լեզուով, իսկ պետական լեզուն աւանդւում էր նրանց իբրև մի առանձին առարկայ: Այդպէս էին թէ քաղաքի և թէ գիւղի ուսումնարանները: Պետերբուրգի սինօզը, կամենալով ուժեղացնել ուսումը յիշեալ դպրոցներում, որոշեց սրանից մի քանի ամիս առաջ՝ եկող սեպտեմբերից բանալու նրանցում նաև չորրորդ տարուայ

դասընթացը: Այդ բարեփոխութիւնը տեղի կ'ունենայ նախ միայն Քարթլ-Կախէթի թեմում, որի հոգևոր խորհրդին և յանձնուեց պատրաստելու նոր ծրագիր և ներկայացնելու ի հաստատութիւն սինոդի:

Այդ հոգևոր խորհրդից ընտրուած և երեք հոգուց (երկու վրացի, մէկը ռուս) բաղկացած մասնաժողովի կարծիքով հարկ չը կար հին ծրագրի մէջ որ և է փոփոխութիւն մտցնել, այլ պէտք էր միայն նոր բացուելիք չորրորդ բաժանմունքում կրկնել ռուսաց լեզուով այն բոլորը, ինչ որ աշակերտները սովորում են մայրենի լեզուով նախորդ երեք տարիներում: Այդպիսով երկխաները, մասնաժողովի կարծիքով, աւելի հիմնաւոր կ'իմամանային իրանց ուսածը և բաւականաչափ կը տիրապետէին նաև պետական լեզուին: Հոգևոր խորհուրդը՝ նախագահութեամբ էքզարքոս Ֆիլաիանի՝ մասնաժողովի այդ առաջարկութեանը գերադասեց և ամբողջովին ընդունեց Քարթլ-Կախէթի եկեղեցական ուսումնարանների վերահիտող քահանայ Վ. օ ս օ ր գ օ վի մշակած նախագիծը, որ կայանում է հետեւեալում: Այդ ուսումնարանները բաժանուում են նախ քաղաքային և գիւղային ուսումնարանների, բոլոր քաղաքայիններում ուսումնական առարկաները աւանդուում են անպայման՝ ամբողջ 4 տարուայ ընթացքում, սկզբից մինչև վերջը՝ ռուսաց լեզուով: Վրացերէնն աւանդուում է միայն իբրև առանձին առարկայ և այդ էլ այն դէպքում, եթէ ուսուցիչը գիտէ այդ լեզուն: Դասաւանդութիւնը հեշտացնելու համար գործ է դրուում այսպէս անուանուած համը մերտդը, այսինքն ուսուցիչը հասկացնում է երկխաներին իր ուղած բաները զանազան շարժումներով և նշաններով և ապա սովորեցնում դրանց համապատասխան բառերն ու խօսքերը: Գիւղական ուսումնարանները բաժանուում են 2 խմբի, այն ուսումնարաններում, որոնց մէջ վրացիների հետ սովորում են նաև ուրիշ ազգի երեխաներ, ինչպէս են հայեր, յոյներ, օսեր, ռուսներ, այսօրիներ և այլն, — դասաւանդութիւնը լինում է բացարձակապէս քաղաքային ուսումնարանների նման. եթէ մինչև իսկ նրանցում վրացիների թիւը կազմէ ահագին մեծամասնութիւն և միւս ազգերի երեխաներն էլ իմանան վրացերէնը: Երկրորդ խմբի ուսումնարանները գիւղերում կազմում են նրանք, որոնցում սովորում են անխառն, զուտ վրացի: Դրանց ուսման ծրագիրն այսպէս է. առաջին տարին առարկաները սովորում են մայրենի լեզուով, իսկ ռուսերէնից ունեն միայն բերանացի լեզուական վարժութիւններ (լեքսական դասեր). երկրորդ և երրորդ տարին առարկաներն աւանդուում են զուղընթացաբար վրացերէն և ռուսերէն լեզուներով, այսինքն իւրաքանչիւր դա-

սը վրայերէնից անմիջապէս թարգմանում է ուսերէնի. չոր-  
րորդ տարին բոլոր սովորածը կրկնում է ուսերէնով: Այն բոլոր  
ուսումնարաններում, որտեղ ուսուցիչը գիտէ վրայերէն, չոր-  
րորդ տարուայ ընթացքում պէտք է սովորեցնէ միայն հին, խու-  
ցուրի կոչուած վրայ եկեղեցական լեզուն, իսկ կենդանի լեզուի  
դասեր այդ բաժանմունքում չեն լինելու:

Վրաստանի հոգևոր խորհրդի այդ նոր նախագիծը, բնա-  
կանաբար, մեծ տալաւորութիւն թողեց, վրայ հասարակութեան  
և մամուլի վրայ: Վրայ մամուլը, յուսալով որ սինոդը կը յարգէ  
տեղացիների կարծիքը, ենթարկեց այդ դպրոցական նոր ծրա-  
գիրը մանրամասն և եռանդոտ քննութեան՝ մասկավարժական և  
այլ տեսակէտերից:

«Յերեկուայ լոյսի պէս պարզ է,—ասում է «Իվերիան»—  
թէ որքան անծիշտ է այդ ծրագրի իմաստը: Գրա իրականացումը  
կատարեալ դժոխքի կը փոխի ուսումնարանները: Մանուկների  
մաքի չփոթում ու խանդարում—ահա նրա անմիջական հետեան-  
քը: Նա իրար կ'անցնէ նաև գիւղացիներին և պառակտում կը  
յառաջացնէ նրանց մէջ: Մինչև օրս վրայի գիւղացին եղբայ-  
րաբար էր վարւում հայերի և օսերի հետ և իրաններից չէր  
ջոկում նրանց, բայց այժմ այդ եղբայրական յարաբերութիւնը  
(միևնոյն գիւղում) կը քանդուի և պառակտում կը գոյացնի,  
եթէ գիւղն այլ ևս չի ճանաչուի վրայ գիւղ և նրա ուսումնա-  
րանը՝ վրայ ուսումնարան լոկ այն պատճառով, որ այդ գիւ-  
ղում բնակութիւն ունեն մի քանի ատեն հայ կամ օս: Այն ժա-  
մանակ վրայի գիւղացիք վրաստակար կը համարեն այդպիսի հա-  
րեաններին, ամեն տեսակ հնար գործ կը դնեն, որ նրանց հա-  
լածեն գիւղից, նրանց երեխաներին կ'արգելեն ուսումնարան  
յաճախելը և այսպիսով կը ստեղծուի մի դժբախտ դրութիւն:  
Մինչդեռ դպրոցն ամեն տեղ ծնում է բարեմտութիւն և բարե-  
սրտութիւն, նա մեղսնում կ'աճեցնէ այսուհետև միայն վայրա-  
գութիւն, չարութիւն և թշնամութիւն»\*):

Համր մեթոդով լեզուի և կրօնի դասաւարտութեան անյար-  
մարութիւնը լրագիրը ձեակերպում է հետեւեալ կերպով.

«Համր մեթոդի օգնութեամբ երեխան կարող է սովորել  
լեզուի միայն տեսանելի, մարմնական, նիւթական կողմը և այն  
էլ մեծ դժուարութեամբ, բայց նա բոլորովին անզօր է ծանօ-  
թացնելու աշակերաններին խօսքի անտեսանելի, հոգեկան և աս-  
տուածային կողմի հետ, մինչդեռ հէնց այս վերջին կողմն է ա-  
մենագլխաւորը եկեղեցական-ձխական ուսումնարաններում:

\*) «Իվերիան», № 148.

Այդ մեթոդը անպատճառ կը զարգացնէ ուսումնարաններում հեթանոսական նիւթապաշտութիւն և բոլորովին կը հալածէ այնտեղից քրիստոնէական իդէալիզմը: Ուստի գրա մուտքը նոյնքան անընդունելի պէտք է լինի ծխական դպրոցներում, որքան և սատանայինը — դրախտում:

«Էւրաքանչիւր դաւանութեան ազգին շնորհուած է իրաւունք սովորացնելու իր կրօնը երեխաներին մայրենի լեզուով և այդ ոչ միայն տարրական, այլ նաև միջնակարգ և բարձրագոյն ուսումնարաններում: Այդպէս է Ասիայում, Ամերիկայում, Ռուսաստանում և ամեն տեղ: Ի՞նչու և ապա մեր ազգին էլ կը պէտք է շնորհուի այդ բարիքը: Ինչո՞ւ պէտք է նա կազմի այդ ցաւալի բացառութիւնը ուրիշ ժողովուրդների մէջ: Քանի տարի են սովորում ռուս մանուկները կրօնը տարրական ուսումնարաններում իրանց մայրենի լեզուով: Երեք: Մենք ռուսների կղբայրներն ենք, նրանց հաւատակիցը, նրանց հետ յօժար կամքով միացած և հաւատարիմ հպատակ ռուս թագաւորի, ուրեմն եթէ կայ աշխարհում արդարութիւն, պէտք է մեր երեխաներին էլ շնորհուի այդ լաւութիւնը, պէտք է նրանք էլ ուսանեն իրանց մայրենի լեզուով՝ իրանց հաւատի վարդապետութիւնն ու սրբազան պատմութիւնը» \*):

Այդ դպրոցական նոր ծրագրի առիթով վրաց լրագիրն անում է իր մի խմբագրականում հետևեալ առաջարկութիւնը.

«Հոգևորականութիւնը, որպէս պաշտպան իր հօտի բարոյական և կրօնական շահերի, ունի իրաւունք, որքան մեզ յայտնի է, կազմելու պէտք եղած ժամանակը գործակալութիւնների ժողովներ, դատելու այս կամ այն առարկայի մասին և ապա ներկայացնելու իր կարծիքն ու որոշումը տեղական հոգևոր կառավարութեան: Յուսով ենք, որ ներկայ դէպքումն էլ մեր հոգևորականութիւնը նոյն տեսակ կը վարուի, և եթէ համոզուի, որ դպրոցական նոր ծրագիրը անյարմար է, կը ներկայացնէ իր պատճառարանուած կարծիքը թեմի բարձրագոյն վարչութեան՝ այդ կարծիքին կանոնաւոր ընթացք տալու համար: Բացի այդ, մեր հոգևորականութիւնը կարող է խնդրել յիշեալ վարչութիւնից, որ նշանակուի նոյնպէս՝ որքան կարելի է շուտ՝ ամբողջ թեմի հոգևորականների ժողով, որպէս զի այդ վերջինը քննէ նոր ծրագիրը և, նրան չընդունելու դէպքում, խնդրէ Վրաստանի էքզարքոս սրբ. Ֆլաւիանի միջնորդութիւնը ս. սինօդի առաջ» \*\*):

\*) «Եվերիա», № № 148 և 150.

\*\*\*) Ibid.

Մեր այս տեղեկութիւնը լրացնելու համար պէտք է աւելացնենք նաև, որ վերոյիշեալ 200 ծխական դպրոցներից 32-ում սովորում են անխառն կերպով միայն յոյներ:

Մենք մի առանձին բաւականութեամբ անցնում ենք այժմ մի միլիթարական երևոյթի մեր հարևանների կեանքում: Դրանց ազգային հաստատութիւնների մէջ շատ պատուաւոր տեղ է բռնում «Վրաց զբազիտութիւն տարածող ընկերութիւնը», որ գործել է արդիւնաւէտ կերպով ամբողջ 22 տարի: Ընկերութիւնն ունի իր ձեռքում այն բոլոր գործօնները, որ անհրաժեշտ են մի այդպիսի բարձր գաղափար իրականացնելու համար. ուսումնարաններ, էժանագին գրադարան-ընթերցարաններ, սեփական միջոցներով հրատարակուող գրքեր, թանգարան, գիտնական գրքերի և վրացերէն ձեռագիրների ժողովածու, գրավաճառանոց և մինչև իսկ լուսանկարչանոց, որ նուիրել է նրան հանգուցեալ Բօինովը... Բացի այդ՝ ընկերութիւնն օգնում է զրամով գրողներին և ուսանողներին և գրքերով ու ուսումնական պիտոյքներով՝ այլ և այլ—ոչ իր սեփական—գպրոցներին և գրադարաններին: Նա ունի նոյնպէս՝ թէև չափաւոր՝ յատուկ գումարներ (մօտ 10,000 ուրբլի) գրողների, թանգարանի, ձեռագիրների ժողովածուի և ապագայ տպարանի համար:

Անցեալ 1900 թուին ընկերութիւնն ունեցել է, ինչպէս այդ երևում է վերջերս լոյս տեսած հաշուից, 8 պատուաւոր, 73 հիմնադիր և 588 իսկական անդամ. պահել է 3 ուսումնարան՝ ամբողջապէս իր հաշուով, դարձեալ 3 ուսումնարան, որոնց ծախսի կէսը ինքն է հոգում, իսկ մնացածը—գիւղական հասարակութիւնը և էլի 2 ուսումնարան, որոնց ծախսը յանձն է առել իր վրայ Գուլթայիսի կալուածական բանկը. ունեցել է 7 էժանագին գրադարան-ընթերցարան՝ քաղաքներում և գիւղերում. նպաստ է տուել 10 ուրիշ ուսումնարանի և 6 գրադարան-ընթերցարանի. տպագրել է 5 անուն գիրք, որոնցից մէկը, այն է մեր ընթերցողներին ծանօթ կրթիչտ Փ. Քօրիձէի կերպերը՝ դուրս է եկել ութը առանձին տետրակներով. ընդհանուր ծախսը այդ գրքերի, որոնց մէջ կան և դասադրքեր (տասնեակ հաղարներով), եղել է 7375 ուրբլի: Այնուհետև ընկերութեան գրավաճառանոցում սեփական և ուրիշներից վերցրած հրատարակութիւնները եղել են 35,319 ուրբլու արժողութեան, որոնցից ծախուել է տարուայ ընթացքում 19,662 ուրբլու ապրանք և զուտ արդիւնք մնացել է գրանից 1917 ուրբլի: Ընկերութեան գրասենեակում պահուող մատենադարանում գտնուում էր 3355 վրացերէն գիրք և ձեռագիր և 1254 գիրք էլ օտար լեզուներով: Հաշուեւածութեան տարին ընդհանուր մուտք եղել է 19,990

ուսբլի և Նոյնքան էլ ծախս, որից մօտ 9000 ուսբլին ընկնում է ուսումնարանների վրայ:

Ընկերութիւնը մեծ համակրութիւն է վայելում գաւառներում, որտեղ շարունակ տրւում են ներկայացումներ, կազմւում երեկոյթներ, անուամ հանգանակութիւններ և արդիւնքն ուղարկւում ընկերութեանը: Բաւական է յիշել այդ կողմից, որ միայն Բաթումից ու Վլադիկաւկազից ստացուել է հաշուետւութեան տարին 7365 ուսբլի. Բագուից—1500 ու., Գանձակից—400 ու. և այլն: Իբրև մի հետաքրքրական բան, աւելացնենք նաև, որ անցեալ տարի 15 անձ և հաստատութիւն իրաւունք են վերցրել ընկերութիւնից պահելու իրանց մօտ փակ գանձանակներ (շուլար), որոնցից գոյացել է 186 ուսբլի:

Ընկերութեան ամբողջ գոյքն հաւասարւում էր 1901 թ. յունուարի 1-ին 48,923 ուսբլու:

Վրացիք կարող են պարծենալ, որ մեզանից շուտ հասկացան ժամանակակից նշանաւոր գաղափարներից մէկի՝ կօօպերատիւ ընկերութիւնների կազմակերպութեան՝ իրականացնելու անհրաժեշտութիւնը: Տասը տարուց աւելի է, որ Վրաստանի գիւղերում և քաղաքներում գործում են թէ արդիւնաբերողների և թէ սպառողների ընկերակցութիւններ, աւելի կամ պակաս չըջանառութեամբ: Չունենալով ներկայ բուսկիս մեր ձեռքում ճիշտ թուանշաններ այդ օրինակ կազմակերպութիւնների չըջանառութեան և ել և մուտքի մասին, մենք կը թուենք այս անգամ այդ ընկերակցութիւններից մի քանիսի գործունէութեան տեղերը: Թիֆլիսում գոյութիւն ունեցող վրաց «Շուամավալի» (միջնորդ) սպառողական ընկերութիւնը պահում է իր անգամների համար մի խանութ: Նոյն քաղաքում նորերս հիմնուեց մի ընկերութիւն, որ նպատակ ունի մատակարարելու իր անդամներին հաւեր և այլ ընտանի թռչուններ: Քուլթայիում մօտ 2 ամիս առաջ հիմնուեց իր անդամներին թխած հաց մատակարարելու ընկերակցութիւն: «Շուամավալի» նման խանութներ կան Կախէթի Մաչխանի և Շիրքա գիւղերում: Արդիւնաբերողների ընկերակցութիւններ գոյութիւն ունեն՝ երկուսը Կախէթում—այգետէրերի—սեփական գինին ծախելու, մէկը՝ Գօրու գաւառում—տեղական կալուածատէրերի—ամենատեսակ գիւղական արդիւնաբերութիւնները ծախելու (պահեստը գտնւում է Գօմի գիւղում), երեքը՝ Քուլթայիսի նահանգում, որոնցից երկուսը, այն է Օղուրգէթ քաղաքի և Կուխի գիւղի ընկերակցութիւնները ծախում են բոժոժ, իսկ երրորդը՝ Քուլթայիս քաղաքի «Կօլխիդա» ընկերակցութիւնը—տեղական այլ և այլ արդիւնքները:

Այդ վերջին երեք ընկերակցութիւնները ունեն ընդարձակ շրջանառութիւն և իրանց ապրանքի (բոժոժ, ընկոյզի ծառ, սիմինդր և այլն) մեծագոյն մասը արտահանում են Եւրոպա, որտեղ ունենում են շարունակ իրանց միջլից ընտրած գործակալներ: Կախէթի ընկերութիւններն ունենն թիֆլիսում մեծ պահեստ և գրանց գինին ուղարկում է նոյնպէս Ռուսաստան և արտասահման: Այդ տեսակ արդիւնաբերողների ու սպառողների ընկերակցութիւններ, ինչպէս երևում է վրաց լրագրութեան մէջ տպուող տեղեկութիւններից, հիմնուելու են մօտիկ ապագայում նաև ուրիշ շատ տեղերում: Ուշադրութեան արժանի են այդ վերջինների մէջ Կախէթի «ոչխարարոյժերի» և «ծխախոտարոյժերի» նախագծուած ընդարձակ ընկերակցութիւնները:

Հանդուցեալ Արծրունին մի ժամանակ ասում էր, որ հայերը, առանձին վերցրած՝ լաւ են, առաջադէմ են, բայց միասին վերցրած՝ անպէտք են... Մեր այդ «խմբական անպէտքութիւնը» հաստատուում է այժմ, ի միջի այլոց, և այն ապշեցնող հանգամանքով, որ հայ մարդու համար գոյութիւն չունի մինչև օրս և ոչ մի կօօպերատիվ կազմակերպութիւն...

Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆ